Արհեստական անձրև առաջացնելու համար ամպերում փոշեցրում են արծաթի յոդիդ, պինդ ածխաթթու կամ դարձյալ ինչ-որ նուկլեացնող (այդպես են կոչվում մթնոլորտում ջրային գոլորշիների խտացման կենտրոններ առաջացնող նյութերը)։ Ամպերը խտանում են և անձրև դարձած թափվում ցած։ Այդպես է վերացվում ամպամածությունն ու մառախուղը օդանավակայաններում։

Դա պահանջում է մեծ քանակությամբ նուկլեացնողներ, որոնք սակայն անկայուն են, օգտագործման տեսակետից անհարմար, թանկ են և այդ բոլորից բացի ապդում են որոշակի պայմաններում։ Ահա թե ինչու արհեստական անձրևը գյուղատնտեսության մեջ լայն կիրառում չգտավ։

Այդ թերություններից զգալիորեն կերծ է մետալդեհիդը՝ բավական պարզ և վաղուց հայտնի քիմիական միացությունը։ Վերջերս այն կիրառել է Նագոյի համալսարանի (Ճապոնիա) գիտնական Նորիխիկո Ֆուկուտան։ Գիտնականը Ավստրալիայի պետական ռադիոֆիզիկայի լաբորատորիայի (Սիդնեյ) աշխատակիցների հետ համատեղ փորձեր է անցկացրել Ավստրալիայի չորային շրջաններում։ Ի տարբերություն մյուս նուկլեացնողների մետալդեհիդը չի վախենում արևից։ +55° ջերմության դեպքում այն մի ժամ պահում է իր ուժը, իսկ մինչև + 31°-ը առհասարակ կայուն է, այն դեպքում, երբ, օրինակ, արծաթի յոդիդը չի դիմանում 25°-ին։ Մետալդեհիդը հատկապես ակտիվ է այնպիսի եղանակներին, երբ անձրևները հազվադեպ են տեղում։

Ավստրալիացիները հուսով են, որ այսուհետև կարող են ստանալ էժան անձրև։

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՒՄ Է ԴԵԼՖԻՆՆԵՐԻ «ԼԵԶՈՒՆ»

Օգտվելով խոսքն ըմբռնելու բարդ օպտիկական սիստեմով, որը «Սցեպտրոն» անունն է կրում, գիտնականները փորձում են հաղորդակցության մեջ մտնել դելֆիններների հետ։ Արտաքին աշխարհի հետ մարդու կապն ընդլայնելու վերաբերյալ այս նոր խնդրի մասին զրույցը, որն ուղեկցվեց համապատասխան հնարքների ցուցադրմամբ, տեղի ունեցավ բժշկության և կենսաբանության մեջ տեխնիկայի կիրառմանը նվիրված 16-րդ ամենամյա կոնֆերանսում։ Կոնֆերանսն անցկացվեց Բալտիմորում (ԱՄՆ)։ Դելֆինների «լեզվի» ուսումնասիրման մասին հաղորդեցին Սպեռնի ֆիրմայի (Նյու-Յորքի նահանգ) աշխատակիցներ Բալանդիսը և Ռենդը։

Ըստ նրանց, արդեն երկար ժամանակ հայտնի է, որ դելֆինները բավականին խելամիտ կենդանիներ են և ունեն սեփական «լեզու»։ Դոկտոր Լիլիի կատարած աշխատանքները ցույց են տվել, որ դելֆինները ազդանշանում են իրար կերի, ստորջրյա խոչընդոտների մասին, և բացի այդ, ընդունակ են նմանակելու մարդու ձայնը։ Դոկտոր Լիլին կարծում է, որ դելֆինների հետ ազդանշանների փոխանակումը—այլ տեսակի էակների հետ մարդու առաջին շփումը—կարող է ունենալ էվոլյուցիոն բնույթի՝ հեռուն գնացող հետևանքներ։

digitised by A.R.A.R.@